«ԱՐԽԻԹՈՒԼՍ» ՍՊԸ

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ և ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

# Ֆրունզեի(Արշակունյաց ) փողոցի ոռոգման նպատակով խորքային հորի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման խորհրդատվական աշխատանքներ

Պայմանագիր թիվ՝ ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-23/8

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

## ԳԻՐՔ 3

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«ԱՐԽԻԹՈՒԼՍ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝ Գ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023 թ.

# ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ


ԳԻՐՔ 1. ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ԳԻՐՔ 2. ԳԾԱԳՐԵՐ

ԳԻՐՔ 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ԳԻՐՔ 4. ՆԱԽԱՀԱՇԻՎ

## *Ներածություն*

*Սույն «Աշխատանքների ծավալները» ԱԾ նախատեսված է՝ շինարարական պայմանագրի Հավակնորդի կողմից իր ֆինանսական առաջարկի մշակման համար:*

*Հավակնորդը պետք է հաշվի առնի, որ ԱԾ-ի յուրաքանչյուր կետի համար պետք է ներկայացված լինի մեկ գին, որը հետագայում ենթակա չէ փոփոխությունների:*

***ԱԾ-ում ներկայացված հողային աշխատանքների նկարագրության բաժնում փողոցներում և երթևեկելի այլ հատվածներում, որտեղ հնարավոր են շինարարական մեքենա մեխանիզմների մուտքը նշված չէ գրունտի մշակման եղանակը՝մեխանիզմով կամ ձեռքով: Ձեռքով մշակվող գրունտի ծավալը նշված է միայն այն հատվածներում, որտեղ մեքենա մեխանիզմների մուտքը բացառվում է կամ արգելվում:***

*ԱԾ-ի մեջ ներառված չեն հետևյալ աշխատանքները Շինարարության կազմակերպման և գործարկման–կարգաբերման աշխատանքների հետ կապված ծավալները, որոք որոշելու համար Կապալառուն պարտավոր է մրցութային առաջարկի պատրաստման փուլում մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման իր տարբերակը՝ ելնելով իր պոտենցիալ հնարավորություններից և աշխատանքների կատարման իր նախընտրած մեթոդներից:*

*Գնի մեջ պետք է հաշվի առնվի տվյալ աշխատանքի տեսակին վերաբերող բոլոր ծախսերի լրակազմը, ներառելով նաև բոլոր զուգընթաց կազմակերպչական և տեխնոլոգիական գործընթացները:*

*Ստույգ գնային առաջարկ ներկայացնելու համար Հավակնորդը ուսումնասիրում է իրեն տրամադրված մրցութային նյութերը, կառույցի առկա վիճակը, աշխատանքների կազմակերպման և կատարման պայմանները տեղում, հաշվի է առնում իր տեխնիկական հնարավորությունները, աշխատանքների կատարման տեխնոլոգիական նախընտրած հնարքները և գնագոյացման այլ փաստարկներ:*

*Հավակնորդը պարտավոր է ընդգրկել իր ֆինանսական առաջարկի միավոր գներում հենյալ աշխատանքների հետ կապված ծախսերը.*

- *Շինարարության կազմակերպման և գործարկման-կարգաբերման աշխատանքների հետ կապված, ինչպես նաև շինարարական արտադրության և շինարարության կազմակերպման նախագծի կազմման հետ կապված ծախսերը*
- *Բոլոր ծախսերը, որոնք կարող են առաջանալ պետական համայնքային հողերի ժամանակավոր օգտագործման ընթացքում,*
- *Տեղական իշխանությունների, ճանապարհատրանսպորտային ոստիկանության և այլ կազմակերպությունների հետ անհրաժեշտ համաձայնեցումներն ու դրանց հետ կապված ծախսերը,*
- *Թաքնված կամ նախագծով չնախատեսված ստորգետնյա ինժեներական կոմունիկացիաների ապամոնտաժման, տեղափոխման կամ այլ աշխատանքների հետ կապված ծախսերը :*
- *Փոխհատուցման բոլոր ծախսերը, որոնք կարող են առաջանալ մասնավոր հողատարածքներում պտղատու ծառերի կտրման անհրաժեշտության դեպքում*

***Ծավալաթերթը անհրաժեշտ է լրացնել առանց ջնջումների և ուղղումների:***